բում հայի ճակատագիրը վերջին պատերազմի ընթացքին, բայց՝ «ըստ ամենայնի հասկանալի եւ ըմբռնելի»:

Գերման գիտնականի այս եւ նման «տեսութիւնների արժան գնահատականը ժամանակին տուել եմ իմ վերոյիշեալ յօդուածում: Զանգրաւառնանք այդ խնդրին: Իմ նպատակն էր այստեղ յիշատակել այն փաստը, որ իր մասնագիտութեան՝ մարդաբանութեան եւ ազգագրութեան մէջ անուանի գիտնականը — պատմութեան եւ քաղաքագիտութեան մէջ պարզ համբակ — իր կողմից ու բոլորովին անկախաբար յայտնում է այն կարծիքը, թէ «հայերի նման բազմածին ժողովուրդ չիչ կայ, իսկ աւելի՛ բազմածին քան հայերը — եւ ոչ մէկը»:

Մեծ եղեռնին զոհ գնացած մէկ միլիոն հայերի զանգուածային կոտորածն էլ ազգագրագէտ հեղինակը եւ հայատեաց գիտնականը «մարդաբանական տեսակէտից» համարում է մի տեսակ «արիւն առնելու» անհրաժեշտութիւն՝ հայերի նման մի բազմածին ժողովուրդի համար, «որից այդ ազգը, չնորհիւ իր անօրինակ բազմազաւակութեան, կարճ ժամանակ յետոյ պիտի նորէն կ՝ազգուրուի»: Ու իր ասածները հիմնաւորելու համար նա առաջ է բերում ամերիկեան նեգրերի օրինակը Վերին Գուինէի ծովեզերքում: Այդ երկիրները, ասում է նա, հակառակ դարեր շարունակ գերիներ արտածելուն դէպի Ամերիկա, հակառակ նաեւ «մարդկային անհամար զոհաբերութեանց տեղական սովորութեան», այսօր աշխարհիս ամենախիտ բնակչութիւն ունեցող երկիրների թուին են պատկանում, չնորհիւ իրենց ժողովուրդների բազմածնութեան»:

Լա՛ւ մխիթարութիւն մեր սրտին...ի տես մեր հայրենական տերրիտորիայի 4/5-ի ամայութեան, հայաթափուր վիճակին: Բայց եւ այնպէս արձանագրենք այս հեղինակաւոր կարծիքն էլ, հայ ցեղի արտակարգ բազմածնութեան մասին:

(Շարունակելի)

ՅԱԿՈՎԲ ՉՈՒՂԱՅԵՑԻ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՆ)

Գրեց՝ ԻՐԱԶԵԿ

4.

ՊԱԿԱՍ յուսահատական չէր հայութեան նաեւ մտաւոր-մշակոյթային եւ բարոյական վիճակը, մահմեդական տիրապետութեան ներքոյ: Տնտեսականի մասին էլ չենք խօսում, որովհետեւ դա արեւի լոյսի պէս արդէն պարզ է:

Եւ ի՞նչպէս կարող էր այլ կերպ լինել նման դժոխային պայմաններում, երբ ամբողջ երկրում մահն ու սարսափն էին թագաւորում եւ թշուառութիւնը կապարի նման ծանրացած էր ամէնքի ուսերին, երբ ամէն մարդ մտահոգուած էր գերազանցապէս միայն եւ միայն իր ֆիզիքական գոյութիւնը փրկելու հոգսով: Այդպիսի հանգամանքներում չէ թէ ծաղկել, այլ նոյն իսկ ապրել ու շնչել չէին կարող ո՛չ գիտութիւնը, ո՛չ գիրն ու գրականութիւնը, ո՛չ բարոյականութիւնը: Նրանք ամէնից առաջ պահանջում են քաղաքական նպաստաւոր պայմաններ, մարդկային դէթ տարրական իրաւունքների ճանաչումն եւ տնտեսական գոնէ տանելի կացութիւն — ապրել կարողանալու համար:

Դաւրիժեցին ներկայացնում է մեզ մի շարք հոգեւորական դէմքեր, որոնց ընդհանուր պատկերը, վերոյիշեալ յատկութիւնների տեսակէտից, շատ ստոր է: Բայց չբաւականանալով դրանով, նա բազմաթիւ անգամներ գծում է եւ ամբողջ հոգեւորականութեան պատկերը, դրանով կամենալով որոշ գաղափար տալ մեզ նաեւ ժողովրդի մասին: Այդ վկայութիւններից մէկը ասում է.—

«Կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով եւ կաշառօք ընկալեալք զաստիճան կաթո-